«Ես ոտքով եմ բարձրանում Գանձասար»

Բ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Իր հերթական 49-րդ այցը Արցախ կատարեց Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոկսը: ԼՂՀ վարչապետ Ա.Դանիելյանի հետ հանդիպման ժամանակ բարոնուհին նեղողություն խնդրեց, որ ընդունելության են եկել ճանապարհի հագուստով: Եկել են, գնացել Գանձասար. «Ես միշտ ոտքով եմ բարձրանում Գանձասար»: Եվ որպեսզի կառավարության նախագահի հետ հանդիպումից չուշանային, հենց Գանձասարից էլ եկել էին հանդիպման:

Մարդասիրական խմբում կային հայեր եւ օտարազգիներ Համաշխարհային քրիստոնեական համերաշխության կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչներ:

Այս անգամ եւս բարոնուհին իր հետ բերել էր բժշկական-մասնագիտական սարքավորումներ ու դեղորայք:

ԼՂՀ վարչապետ Ա.Դանիելյանի հետ հանդիպման ժամանակ խմբի անդամները տարբեր հարցադրումներ արեցին ԼՂՀ սոցիալական եւ քաղաքական այսօրվա վիճակի եւ առաջիկա անելիքների մասին:

Ներկայացնելով ԼՂՀ առօրյան, իշխանությունների դիրքորոշումը Ա.Դանիելյանը նշեց, որ իրենց գերխնդիրը տնտեսական բարեփոխումների կայունացումն է, դրանց ամրապնդումը, բնակչությանը աշխատատեղերով ապահովելը: Այս խնդրի լուծման համար այսօր Արցախն ավելի շատ ակնկալում է միջազգային հանրության փորձը,- ասաց ԼՂՀ վարչապետը: Այդ խնդրում, անշուշտ, իր գործն է անում տկն Քոկսը, որին էլ իրենց երախտագիտությունն են հայտնում արցախցիները:

Մեր հարցին, թե ո՞րն է այն մեծ օգնությունը, որ դեռ չեք բերել Արցախ, տկն Քոկսը պատասխանեց.

- Ամենամեծ օգնությունն այն է, որ կիսվում ենք Արցախի ժողովրդի հետ: Բերած նյութական-մարդասիրական օգնությունն ավելի փոքր է, քան այն հոգեւոր կապերը, որոնցով կապված ենք:

Ամենամեծ գործը, որ կատարելու ենք, կլինի եկող տարի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շրջանակներում կազմակերպվելիք ուխտագնացությունը: Սփյուռքի հարյուրավոր հայ երիտասարդներ ցանկություն են հայտնել միանալու մեզ: Մայիսի 7-ից ոտքով Քաշաթաղից կուղեւորվենք Շուշի, որտեղ մայիսի 9-ին կմասնակցենք մեծ պատարագին եւ ճանապարհը կշարունակենք դեպի Գանձասար:

- Հավատո՞ւմ եք, որ կգա այն օրը, երբ Արցախն ինքը կօգնի մյուս ժողովուրդներին:

- Այդ օրը եկել է: Ազատություն նվաճելու Արցախի փորձը աշխարհի շատ ժողովուրդների համար դաս եղավ: Սա առաջին ու մեծ օգնությունն է, որ տվեց Արցախը:

Այն, ինչի մասին մենք պատմում ենք դրսում, յուրօրինակ օգնություն է դառնում նրանց համար: Այստեղ գործեր կան, որոնք պետք են միջազգային հանրությանը: Ի դեպ, ասեմ, որ այդ հանրության կարծիքը արդեն դրական միտում ունի արցախցիների հանդեպ: